ՄԵՐ ԱՄԵՆՕՐՅԱ ՀԱՑԸ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Վաթսունվեց գիրք: Հազար հարյուր ութսունինը գլուխ: Գրված լինելով 1500 տարվա ընթացքում՝ Աստվածաշունչը շատ ավելին է, քան ընդամենը մի մեծ և հին գիրք. դրա էջերը կենսատու հայտնություն և զորություն են պարունակում, եթե մենք գիտենք, թե ինչպես այն կարդալ:

> ***Հայ. 1:3 -*** *3 Երանելի են այս մարգարէութեան խօսքերը կարդացողը և լսողները, և սորանում գրուածները պահողները. որովհետև ժամանակը մօտեցել է:*
>
> ***2 Տիմ. 3:16-17 -*** *16 Աստծու շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու և արդարութեան մէջ խրատելու համար. 17 որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար:*
>
> ***biblía, Byblos (քաղաքի անուն) "the books — Փյունիկ-Ասորի***

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԵԼԻՑ 16:4

Ել. 16:4 - *4 Եւ Եհովան ասեց Մովսէսին. Ահա ես ձեզ <u>երկնքից հաց</u> պիտի թափեմ, և ժողովուրդը <u>թող վեր կենա ու այն հավաքի</u>, ինչքան անհրաժեշտ է յուրաքանչյուր օրվա համար: Ես այդ կերպ կը փորձեմ նրանց, թէ կ՝ենթարկվե՞ն իմ օրէնքներին, թէ ո՞չ:*

15 Եւ Իսրայէլի որդիները տեսան, և իրար ասեցին. Ի՞նչ է սա. որովհետև չգիտէին թէ ինչ էր. և Մովսէսն ասեց նորանց. Դա այն հացն է, որ Տէրը ձեզ տուել է ուտելու: 16 Եհովայի պատուիրած բանը այս է. Ցուրաքանչյուր ոք դրանցից թող հավաքի այնքան, որքան անհրաժեշտ է մէկ մարդու համար, ըստ ձեր ընտանիքների շնչերի թվի: Հավաքեցէ՛ք ըստ վրանում գտնուող յուրաքանչյուր մարդու թվի: 17 Եւ Իսրայէլի որդիներն այնպէս արին. և որը շատ, և որը քիչ հավաքեց: 18 Եւ օմէրով չափում էին, շատ ունեցողինը չավելացավ, և քիչ ունեցողինը չպակասեց. ամեն մէկն իր կերածի չափ ժողովեց: 19 Եւ Մովսէսն ասեց նորանց. Ոչ մէկը նորանից մինչև առավօտը չպահէ:

1. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԵՐ ԱՄԵՆՕՐՅԱ ՀԱՑՆ Է: (ՀՈԳԵՎՈՐ ՀԱՑ)

Մատ. 6:11 - Մեր ամեն օրվա հացը տուր մեզ այսօր: *(Աստված տալիս է բայց դու պետք է հավաքես)*

- ***Աստվածաշունչն ունի զորություն՝ վերափոխելու մեզ և ամբողջությամբ բավարարելու մեր հոգևոր կարիքները:***

Փիլիպ. 4:19 - 19 Եւ իմ Աստուածը կը լցնի ձեր կարիքները իր հարստության չափով, փառքով, Քրիստոս Հիսուսի միջոցով:

- Երբ Աստված մանանա ուղարկեց Իսրայելի որդիներին, որ ուտեն, Նա դա ամեն օր արեց: Նմանապես մենք կարիք ունենք ամեն օր ուտել Աստծո հացը, որ Աստվածաշունչն է:
- Շատ հավատացյալներ թուլանում և հանձնվում են, որովհետև Աստվածաշունչը նրանց կյանքի ամենօրյա սննդակարգի մաս չի կազմում:

- Հասանելի են Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ, ինչպես նաև աստվածաշնչյան անվճար էլեկտրոնային հավելվածներ: Ընտրիր քեզ համար լավագույն տարբերակը և Աստվածաշնչի ընթերցանությունը քո ամենօրյա կյանքի մաս դարձրու:
- ***«Ճշգրիտ համարժեքը» թարգմանում է բառ առ բառ:***
  «Դինամիկ համարժեքը» թարգմանում է պարբերությունը կամ միտքը:

2. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԵԶ ՊԱՀՈՂ ՀԱՑՆ Է:

Մատ. 4:3 - 3 Եւ փորձիչը նորա մօտ գալով ասեց. <u>Եթէ</u> Աստուծոյ որդի ես, ասա որ այս քարերը հաց լինեն:

- Մատթեոս 4.4-ում Հիսուսը մեջբերում է անում Բ Օրինաց 8.3-ից.

  «...ոչ միայն հացով կապրի մարդ, այլ մարդը Եհովայի բերանից դուրս եկած ամեն բանով կապրէ»:

- ***Երբ սատանան մոտեցավ Հիսուսին և փորձեց Նրան, Հիսուսն օգտագործեց Սուրբ Գիրքը՝ սատանային հաղթելու համար:***

  Հոբ 23:12 - 12 Նորա շրթունքների պատուիրանքներից չեմ շեղվել, իմ կանոնից <u>ավելի պահեցի Նրա բերանի խօսքերը</u>:

  Եբր. 1:3 - Իր զօրության խօսքով ամեն բան պահպանում է՝...

- ***Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է օրը չորս անգամ մտածել Խոսքի վրա՝ երեկոյան, առավոտյան, երբ տանն ենք և երբ ճանապարհին ենք:***

- ***Աստծո Խոսքը բառացիորեն պահում է մեր կյանքը: Լիառատ կյանք ապրելու համար դու պետք է իմանաս Աստվածաշունչը և անես նրա ասածները:***

  Հեսու 1:8 - 8 Այս օրէնքի գիրքը քո բերանից չ'հեռանա, այլ գիշեր և ցերեկ նորա վրա մտածես,որ պահես և կատարես բոլոր նորա միջի գրվածի պէս. որովհետև այն ժամանակ յաջողակ կը լինես, ուղիղ ճանապարհով կ՝ընթանաս և խելամտօրէն կը գործես:

3. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԵՐ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՑՆ Է՝ ՀԻՍՈՒՍԸ

Հով. 6:31-51 - 31 Մեր հայրերը անապատում մանանան կերան. ինչպէս գրուած է թէ Երկնքից հաց տվեց նորանց ուտելու: 32 Հիսուսն էլ նորանց ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. ոչ թէ Մովսէսը տվեց ձեզ այն հացը երկնքից, այլ իմ Հայրը տալիս է ձեզ երկնքից ճշմարիտ հացը: 33 Որովհետև Աստուծոյ հացը նա է՝ <u>որ երկնքից է իջնում</u>, և որ աշխարհին կեանք է տալիս: 34 Նորանք էլ ասեցին. Տէր, ամեն ժամանակ տուր մեզ այդ հացը: 35 Հիսուսն էլ նորանց ասեց. Ես եմ կեանքի հացը. <u>ինձ մօտ եկողը չի սովի</u>, և ինձ հավատացողը երբէք չի ծարավի:

Հովհաննես 6-րդ գլխում Հիսուսը ժողովրդին հիշեցրեց, որ Աստված նրանց նախահայրերին մանանա էր տվել անապատում, Եգիպտոսից դուրս գալուց հետո: 35-րդ համարում Հիսուսը նրանց

ասաց, որ նրանց երկնային Հայրը նրանց տվել էր ճշմարիտ հացը: «Ես եմ կյանքի հացը»,- հայտարարեց Նա: ԵԼԻՑ 16 — ԵՂԻՄԻՑ ԳՆԱՑԻՆ — ջրերի մոտ բանակ տված:

- **Ի՞նչ իմաստով է Հիսուսը նման հացի:**

  Երբ մենք կարդում ենք Աստծո Խոսքը, մենք ստանում ենք Հիսուսի կյանքն ու զորությունը:

  48 Ես եմ կեանքի հացը: 49 Ձեր հայրերը մանանան կերան անապատում, և մեռան. 50 Սա է այն հացը, որ երկնքից է իջնում որ եթէ մէկը սորանից ուտէ, չի մեռնի: 51 Ես եմ կենդանի հացն, որ երկնքիցն է իջել:

  *Հով. **1:1,14 -** 1 Սկզբում էր Բանը. և Բանն Աստուծո մօտ էր. և Բանն Աստուած էր:*

  14 Եւ Բանը մարմին եղաւ՝ և բնակուեց մեր մէջ. և նորա փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից եղած միածնի փառք՝ շնորհքով և ճշմարտութիւնով լիքը:

  *Հայ. **19:11-13 -** 11 Եւ տեսա երկինքը բացված, և ահա մի սպիտակ ձի, և նա որ նորա վրա նստած էր, կոչվում էր Հավատարիմ և Ճշմարիտ, և արդարութիւնով է դատաստան անում և պատերազմում: 12 Եւ նորա աչքերը կրակի բոցի պէս, և նորա գլխի վրա շատ պսակներ. և անուն ունէր գրված, որ ոչ ոք չ'գիտէր բայց միայն ինքն: 13 Եւ իր վրա հանդերձ էր հագած արյունով ներկուած, և նորա անունն կոչվում է Աստուծո Բան:*

ԱՄՓՈՓՈՒՄ

- ***Աստվածաշունչը կյանքի հացն է: Այն մեր ամենօրյա հացն է, մեզ պահող հացը և ճշմարիտ հացը:***